ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/25

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 20.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար «Դիզելային վառելիքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԿԱ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ»ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

www.gnumner.am և www.eauction.armeps.am կայքերում հրապարակված ՀՀ ԿԱ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը կրում է «դիզելային վառելիքի» ձեռքբերման նպատակով հայտարարված աճուրդի անվանում, այսինքն անվանման մեջ որպես աճուրդի ձեռքբերման նպատակ, առարկա նշվել է՝ դիզելային վառելիք:

Հատկանշական է, որ Հրավերի ողջ տեքստում էլ նշվում է «դիզելային վառելիքի» ձեռքբերման մասին, և միայն գնման առարկայի բնութագրից է պարզ դառնում, որ խոսքը գնում է ոչ թե դիզելային վառելիքի, այլ հանդերձանքի մասին:

Վերոհիշյալ թերության արդյունքում Ընթացակարգին մասնակցության հայտ չի ներկայացրել «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, քանի որ տեսնելով ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի վերնագիրը, Ընկերությունը հասկացել է, որ Ընթացակարգը հայտարարվել է «դիզելային վառելիքի» ձեռքբերման նպատակով, այլ ոչ թե հանդերձանքի (նշվածը հանդիսանում է Ընկերության գործունեության ոլորտը):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցության հայտ չի ներկայացրել, քանի որ վերջինս տեսնելով ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի վերնագիրը, ընկալել է, որ Ընթացակարգը հայտարարվել է «դիզելային վառելիքի» ձեռքբերման նպատակով, այլ ոչ թե հանդերձանքի: Մինչդեռ, հայտերի բացումից հետո միայն, մրցակից ընկերություններից տեղեկացել է, որ Ընթացակարգը հայտարարվել է հանդերձանքի ձեռքբերման նպատակով և փաստորեն Հրավերի անվանումը չի համապատասխանել Հրավերի տեքստում ամրագրված ապրանքի նկարագրի հետ:

Բողոքը քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի սխալի հետևանքով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ըստ էության, զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված գնումներին իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, ինչն էլ իր հերթին

հանգեցնում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջների խախտմանը և որպես հետևանք՝ մասնակիցների շրջանակի նվազմանը և նրանց միջև մրցակցության սկզբունքի խախտմանը:

Այսպիսով, ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար «դիզելային վառելիքի» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված էլեկտրոնային աճուրդը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ ոստիկանության զորքեր կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 21.02.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանության զորքերին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ ոստիկանության զորքերի լիազորված ներկայացուցիչ Արսեն Մնացականյանը:

3. ԳԲՔԱ-ԷՍ-2019/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 20.02.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ նաև՝ հրավեր).

ՀՀ ոստիկանության զորքերի կողմից հայտարարվել է ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Աճուրդին մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 12 մասնակից՝ «Աշոտ Ղարագոզյան» ՍՊԸ-ն, «Կ.Կ.Ֆ. Թրեյդինգ» ՍՊԸ-, «Դերձակ» ՍՊԸ-ն, «ԱԲԻ» ՍՊԸ-ն, «Գդակ» ՍՊԸ-ն, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, «Կոտայքկոշ» ԲԲԸ-ն, «ԷԼԼԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, «Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն, «Լևոն Սողոյան Վարդանի» ԱՁ-ն, «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն և «Գրին լայթ» ՍՊԸ-ն:

Աճուրդի հայտարարության և հրավերի վերնագրերում նշվել է Աճուրդի հետևյալ անվանումը. «ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար՝ «դիզելային վառելիքի ձեռքբերման հրավերի հանդերձանքի» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդ»:

ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ թիվ 1 հավելվածով սահմանված են գնման ենթակա հետևյալ ապրանքատեսակները. «գլխարկ, կոստյում, տաբատ, կիսաշրջազգեստ, վերնաշապիկ, ներքնաշապիկ, կիսաճտքավոր կոշիկ, երկարաճիտք կոշիկ, գոտի, գուլպաներ, ուսադիր, քնապարկ»:

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 20.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը տեսնելով ՀՀ ԿԱ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-

19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի վերնագիրը, մասնակցության հայտ չի ներկայացրել, քանի որ վերջինս Հրավերի վերնագրից հասկացել է, որ Աճուրդը հայտարարվել է «դիզելային վառելիք»-ի ձեռքբերման նպատակով, մինչդեռ, հայտերի բացումից հետո միայն տեղեկացել է, որ ՀՀ ԿԱ ՈՌ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդը հայտարարվել է «հանդերձանք»-ի ձեռքբերման նպատակով և Հրավերի անվանումը չի համապատասխանել Հրավերի տեքստում ամրագրված ապրանքի նկարագրի հետ:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ ՀՀ ոստիկանության զորքերի ներկայացուցիչը հայտնեց, որ ՀՀ ԿԱ ՈՌ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտարարության մեջ և հրավերում «դիզելային վառելիք» բառերի նշումը զուտ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակի արդյունքում, սակայն հավելեց, որ նույն նախադասության մեջ միաժամանակ նշված է եղել նաև «հանդերձանք» բառը, իսկ Աճուրդի հրավերով սահմանված գնման ենթակա ապրանքները վերաբերում են բացառապես հանդերձանքին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

• 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն.

• 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- ՀՀ ոստիկանության զորքերի կողմից հայտարարվել է ՀՀ ԿԱ ՈՌ ԷԱՃԱՊՁԲ-19/10/Բ/2/ԻԾ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

- Աճուրդին մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 12 մասնակից:

- Աճուրդի հայտարարության և հրավերի վերնագրերում նշվել է՝ «ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար՝ «դիզելային վառելիքի ձեռքբերման հրավերի հանդերձանքի» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդ»:

- Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ թիվ 1 հավելվածով սահմանված են գնման ենթակա հետևյալ ապրանքատեսակները. «գլխարկ, կոստյում, տաբատ, կիսաշրջազգեստ, վերնաշապիկ, ներքնաշապիկ, կիսաճտքավոր կոշիկ, երկարաճիտք կոշիկ, գոտի, գուլպաներ, ուսադիր, քնապարկ»:

- Աճուրդի հրավերով սահմանված գնման ենթակա ապրանքները վերաբերում են բացառապես հանդերձանքին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աճուրդի հայտարարության մեջ և հրավերի վերնագրում «դիզելային վառելիք» բառերից բացի նշված է եղել նաև «հանդերձանք» բառը, իսկ Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց՝ թիվ 1 հավելվածում ներառված է բացառապես հանդերձանք, հետևաբար Աճուրդի հայտարարության մեջ և հրավերի վերնագրում «դիզելային վառելիք» բառերի սահմանումը զուտ տեխնիկական վրիպակի արդյունք է,

- Բողոքաբերի այն հիմնավորումը, թե Աճուրդի գնահատող հանձնաժողովի սխալի հետևանքով «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ըստ էության զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված գնումներին իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջների խախտմանը և որպես հետևանք՝ մասնակիցների շրջանակի նվազմանը և նրանց միջև մրցակցության սկզբունքի խախտմանը, անհիմն է, քանի որ Աճուրդին մասնակցության հայտ են ներկայացրել թվով 12 մասնակից, իսկ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն զրկված չի եղել Աճուրդի հրավերով սահմանված գնման ենթակա առարկայի բնութագիրն ուսումնասիրելու, ինչպես նաև հրավերի պարզաբանում ստանալու և Աճուրդին մասնակցելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 20.02.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ